

ՀՈՆԱՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԻԶՆԵՐԸ

(Ըստ Յիշատակարանի Զ. դարու)

1899 թ. F. J. Hamilton և E. W. Brooks Ասորերէնէն Անգղիերէն թարգմանած և հրատարակած են անանունի մը «The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene» խորագրով մէկ գիրքը. նոյնին ձեռագիրը կը գտնուէր Բրիտ. ձեռագրաց թանգարանին մէջ 17202 համարով. յառաջաբանը գրած է E. W. Brooks: Այս գիրքը ի սկզբանէ Զաքարիա հեռասորին գործը կը կարծուէր. բայց այս գիրքին հեղինակը նոյնը չէ. այլ անանուն ասորի մը՝ որ թէ՛ Զաքարիայէն, թէ՛ Յովհաննէս Եփեսացիէն և թէ՛ Եւագրէն օգտուած է անոնց պատմութիւններուն ինչ ինչ հատուածները համադրելով: Օգտուած կը կարծուի նաեւ Կայսերաց Յուցակէն և համառօտ ժամանակագրութիւնէ մը. այս բոլոր աղբիւրներուն հետքերը կը նշմարուին գործին ամբողջութեան մէջ:

Գործիս հեղինակը երկու տեղ գրքին մէջ ինքզինքը կը յիշէ. մին՝ յերեսն 161, ուր խօսելով Կատոնոյ ըսուած անձի մը վրայ, որ 503 թ. Ամիդի մէջ պատերազմի մասնակցած է, կ'ըսէ. «կը ճանչնամ զանիկա». և միւսը՝ յերեսն 264 ուր միևնոյն բացատրութիւնը կը գործածէ Տոմինիկոս անուամբ Իտալացիի մը համար, որ Գոթական տիրապետութեան ժամանակ Կ. Պոլիս կը փախչի:

Այս գիրքին հեղինակը կը թուի որ ժամանակ մը բնակած է Ամիդ և Միջագետք, ինչպէս կը հասկցուի իր պատմութիւնէն, և ծանօթացած է Ամիդի ճարտարակաւ Եւստակիոսի հետ (տե՛ս էջ 267):

Հեղինակը իր գիրքը լրացուցած է փրկչական 569 թուականին. բայց գրքին ինչ ինչ հատուածներէն կ'երևի որ 555 և 561 թուականներուն ալ գրած է գրքին ինչ ինչ մասերը:

Այս գիրքը եկեղեցական պատմութեան տէսակէտով մեծ կարեւորութիւն ունի, վասն զի առանձնապէս իր ժամանակի ասորի եկեղեցական գէմքերու մասին տեղեկութիւններ տալէ զատ, կը խօսի

Քաղկեդոնի ժողովի անցու դարձերու վրայ, կը յիշէ Եւտիքէս հերետիկոսը ու անոր դէմ ծառացող այն ուղղափառ եկեղեցականները որ պայքարեցան ու պաշտպանեցին ուղիղ հաւատքը. կը յիշէ այս վէճերուն առթիւ տարագրուող եկեղեցականները, և մէջ կը բերէ Զենոն և Անաստաս կայսրերու հրամանագիրները ի պաշտպանութիւն Միաբնակութեան, կը բովանդակէ Քրիստոսի մարմնոյն չուրջ Յուլիանոս Աղիականացոյն և Սեւրոսի միջև տեղի ունեցած վիճարանական թղթակցութիւնը և ուրիշ նիւթեր: Բայց յիշեալ գիրքին ամէնէն թանկագին հատուածն է վերջին գլուխը՝ ուր հեղինակը վստահիլ անձերէ լսելով կը պատմէ Զ. դարուն Հոնաց երկրին մէջ Աղուանից աշխարհէն և չրջականերէն մէկ քանի հայ եպիսկոպոսներու և քահանաներու Աւետարանի քարոզութիւնը և անոնց ձեռք բերած արդիւնաբեր գործունէութիւնը նոյն երկրին մէջ: Հեղինակին այս հատուածը Հայոց քրիստոնէական քարոզչութեան պատմութեան համար մեծ արժէք ունի. վասն զի կը կարծեմ որ այս թուականին քարոզչութիւնը Հոնաց կողմերը՝ հիմը եղած կրնանք նկատել այն հատուկ տոբոր պատմական տեղեկութիւններուն որ մեր պատմութեան մէջ տեղ տեղ կը յիշուին, ինչպէս Կաղանկայտուացիի Աղուանից պատմութեան մէջ, երբ Իւրայէլ եպիսկոպոսը քրիստոնէութեան կը դարձնէ Կասպից ծովուն հիւսիսային կողմերը բնակող Հոները (667—703) և Հոնաց լեզուին կը թարգմանէ Աստուածաշունչը և ծիսական գիրքերը (տե՛ս The Encyclopaedia Britannica Բ. Հատոր, էջ 570): Հոնաց աշխարհին մէջ Հայոց կողմէն աւետարանչական քարոզչութեան պատմութեան և Հայաստանի սահմանակից երկիրներու տեղագրութեան և հին ազգերու ցեղագրութեան համար ասորի Անանունին այս թանկագին հատուածը, ինչպէս ուրիշ հեղինակներու նոյն գոնով տեղեկութիւնները, մեծապէս յարգի ըլլալով՝ այս անգամ Անգղիերէն բնագիրէն մեր աշխարհաբարով թարգմանեցինք Անանունին նոյն հատուածը Անգղիացի թարգմանիչներուն մէկ քանի կարեւոր ծանօթութիւնները միայն նշանակելով իրենց տեղերը:

Հեղինակին այս շահեկան հատուածին

վրայ մեր կողմանէ ունէ լուսաբանող բացատրութիւն մը չտուինք. միայն նոյնին թարգմանութիւնը տուինք բանասէրներու ուշադրութեան յանձնելու համար զայն, կ'աւելցնենք թէ մեր եկեղեցական մատենագրութեան մէջ ունէ հետք չի տեսնուիր նոյն հատուածին բովանդակութեան. հետեւաբար կ'արժէ լրջօրէն նկատի առնել զայն, ամբողջացնելու համար Հոնայ աշխարհին մէջ Հայոց եկեղեցականներու կողմէն կատարուած Աւետարանի քարոզչական գործին մասին մեր ծանօթութիւնը:

Ասորի Անանուսին հատուածին թարգմանութիւնն է հետեւեալը.

« Ասոնցմէ դատ այս տեղերուն հիւսիսային կողմը կը գտնուին հինգ հաւատացեալ ժողովուրդներ. որոնք ունին քսան և չորս եպիսկոպոսներ, և անոնց կաթողիկոսը կը նստի Դուին՝ Պարսկահայաստանի մայրաքաղաքը: Ասոնց կաթողիկոսին⁽¹⁾ անունն էր Գրիգոր, արդար և նշանաւոր անձ մը:

Ասկէ վերջ կուգայ Կիւրդանը⁽²⁾, Հայաստանի մէջ երկիր մը, այս տեղ բնակողներուն լեզուն յունարէնի նման է, և անոնք ունին քրիստոնեայ իշխան մը՝ որ հպատակ է Պարսկաստանի թագաւորին:

Ասկէ վերջ կուգայ Արբանի երկիրը, Հայաստանի մէջ. ան ունի իր յատուկ լեզուն, հաւատացեալ և մկրտուած ժողովուրդ մ'է. ունի նաև իշխան մը Պարսից թագաւորին հպատակ:

Ասկէ վերջ կուգայ Սիսականի երկիրը, որ ունի իր սեփական լեզուն, ան հաւատացեալ ժողովուրդ մ'է. և հոն կը բնակին նաև հեթանոսներ:

Փաղղունի⁽³⁾ երկիրը ունի իր յատուկ լեզուն, ան կը տարածուի մինչև Կասպից Պահալը և ծովը. Պահալը Հոնայ երկրին մէջ է: Պահակներու անդին կողմը կը գտնուին Պուլիարները որ ունին իրենց սեփական լեզուն. անոնք հեթանոս և բարբարոս ժողովուրդ մ'են և ունին քաղաքներ. և Ալանները որոնք ունին հինգ քաղաքներ. և Դատու(?) ցեղին մարդերը որ կը բնակին լեռներու վրայ և ունին ամբուլթիւններ: Իւննուկիւրը վրանաբանակցեղ մ'է.

Օկուրը, Սապիրը, Պուլիարները⁽¹⁾, Քորթրիկորը, Ավարը, Կազարը, Տիրմարը(?), Սարուկուրը(?), Պակաբիքը(?), Կիւլասը(?), Ապտէլը, Եփթալիտ. այս տասներեք վրանաբանի ժողովուրդները կ'ուսեն առջադիրք, ձուկ, վայրի կենդանիներ և ունին իրենց զէնքերը: Անոնցմէ անդին կը բնակին գաճաճներու և շնամարդերու ցեղերը. ասոնց հիւսիսային արեմուտքը՝ Ամաղոնները⁽²⁾, իւրաքանչիւրը մէկ ստինքով կլինէր. ասոնք բոլորովին առանձին կը բնակին, զէնքով կը պատերազմին և ձիու վրայ. և անոնց մէջ արու չգտնուիր, բայց երբ կ'ուզեն զուգաւորուիլ՝ խաղաղ կերպով կերթան իրենց դրացի ցեղի մը մօտ և մէկ ամսոյ չափ անոնց հետ կը յարաբերուին և կը վերադառնան իրենց երկիրը. երբ անոնք զաւակ կ'ունենան, եթէ արու ըլլայ ծնեալը, կ'սպաննեն զայն, և եթէ էգ՝ ողջ կը պահեն, և այս կերպով կը պահպանեն իրենց զիրքը: Ասոնց մօտ կը բնակի Հարուս(?) կոչուած ցեղը, երկարահասակ յաղթանդամ մարդերով՝ որոնք չունին պատերազմական զէնքեր, և ձիերը չեն կրնար տանիլ զանոնք, իրենց անդամներուն խոշորութեան պատճառաւ(?): Եւ զէպի հիւսիսային արեւելք կը գտնուին ուրիշ սևամորթ երեք ցեղեր:

Այժմ Հոնայ աշխարհին մէջ, զրեթէ քսան տարի առաջ, քանի մը մարդեր տեղական լեզուին քանի մը գիրքեր կը թարգմանեն. և հետեւեալն է անոր ծագումը զոր պիտի պատմեմ շեշով հաւաստիմ մարդերէ՝ Ամիդի մօտ Իսհոզունիէն հիմնուած վանքին մէջ բնակող Ռեաննացի Յովհաննէսէն և խաղախորդ Թովմասէն՝ որ ուրիշներու հետ Կաւաթէն գերի տարուած էին յիսուն տարիէ աւելի առաջ: Երբ գերիները Պարսկաստան կը հասնին՝ կը վաճառուին Հո-

(1) Աս հաւանաբար աղաւաղում մ'է. ինչպէս որ վերեւ բուեցաւ, Պուլիարները քաղաքներ ունին: Այդ ժողովուրդները թրեւս ըլլան Պուլիանները Ազաթանգեղոսի փԱ. հատուածին համաձայն: Անգղիերէնի թարգմանիչներուն այս ծանօթութեան առթիւ կ'աւելցնենք թէ Ազաթանգեղոսի յիշեալ հատուածը Պուլիանի տեղ ունի Հոնք. դարձեալ նոյն բառը ունի հատուածին յունարէնը (տե՛ս Victor Langlois Collection, հատ. Ա. էջ 134): Թարգմանիչները հաւանաբար յունարէն ուրիշ ընդօրինակութենէ մը քաղած են զայն:

(2) Տե՛ս Սղրապոն, փԱ. 5, 1:

(1) Հաւանաբար «սուսջին» բառը ինկած է:

(2) Վրաստան կամ Իրերիտա:

(3) Ափիսագիա:

նաց և կը զրկուին Պահակէն անդին և երեսուն տարիէ աւելի հոն կը մնան. կ'աւանանան և դաւակներ կ'ունենան: Բայց այսքան ժամանակէ վերջ անոնք կը վերադառնան և իրենց բերանով հետեւալ պատմութիւնը կ'ընեն մեզ. — Երբ դարձան Հոռոմոց երկրէն գերաւածները՝ որ Հոռոմ կողմէն տարուած էին, և անոնց երկրին մէջ 34 տարի մնացած էին. այն ժամանակ հրեշտակ մը Արամի երկրին եպիսկոպոս Կարգուծատ կոչուած մարդուն կ'երևնայ և կ'ըսէ անոր, « երեք բարեպաշտ քահանաներ առնելով զնա՝ դաշտը և ընդունէ ինձմէ այն պատգամը զոր Տէրը կուտայ ինձ, վասնզի ես պահապանն եմ այն գերիններուն որ Հոռոմոց երկրէն կ'երթան դէպի ուրիշ ազգերու երկիրը և հոն կ'աղօթեն Աստուծոյ: Եւ ան ըսաւ ինձ ինչ որ քեզի պիտի ըսեմ: Երբ միւսնոյն Կարգուծատը որ՝ երբ յունարէնի կը թարգմանուի՝ կը կոչուի Theokletos⁽¹⁾, բարեպաշտութեամբ դաշտ երթալով երբ կ'աղօթէ առ Աստուած երեք քահանաներուն հետ, այն ժամանակ հրեշտակը կ'ըսէ անոր « եկո՛ւր, զնա՝ ազգերու երկիրը և քարոզէ հեթանոսներուն, և անոնց համար քահանաներ ձեռնադրէ, և խորհուրդներ մատակարարէ, և զօրացուր զանոնք. և ես քեզ հետ պիտի ըլլամ, և հոն ես քեզ հետ սիրով պիտի վարուիմ և դուք հոն հրաշքներ պիտի ընէք այդ ազգերուն մէջ, և ձեր ծառայութեան համար՝ ինչ որ պէտք է պիտի գտնէք հոն: Եւ շորս ուրիշներ անոնց հետ կ'երթան. և այդ երկրին մէջ՝ ուր հանդիստ չկար, այս եօթը քահանաները երեկոյէ երեկոյ կը գտնէին բնակարան մը և հացի եօթը նկանակներ և կուծ մը ջուր: Անոնք Պահակի ճամբով հոն չի մտան, այլ առաջնորդուեցան լեռներու վրայէն: Երբ ասոնք հասան իրենց տեղը՝ այս բաները գերիններուն պատմեցին և շատերը մկրտուեցան, և Հոռոմ մէջ շատերն

ալ քրիստոնեայ դարձան: Անոնք հոն մընացին եօթը տարի և գիրքեր թարգմանեցին Հոռոմ լեզուին:

Նոյն ժամանակները Պրոպիոս թագաւորին կողմէն դեսպանութեան պաշտօնով այդ կողմերը զրկուեցաւ, բնիկները պատերազմի հրաւիրելու: Երբ ան Հոռոմացի տեղեկութիւն կ'առնէ այդ սուրբ մարդերու մասին և գերիններէն կ'իմանայ անոնց պատմութիւնը՝ փափաք կ'ունենայ տեսնելու զանոնք: Ան կը տեսնէ զանոնք, և անոնցմէ կ'ընդունի օրհնութիւն, և այդ ազգերուն առջև անոնց շատ պատիւներ կ'ընծայէ:

Երբ մեր թագաւորը կը լսէ անորմէ նոյն մարդոց գործերը, դրացի հոռոմ քահանաներէն երեսուն ջորիներ բռնաւարելով կը զրկէ անոնց, ինչպէս նաև ալիւր, գինի, իւղ, բրդեայ հանդերձներ և ուրիշ անհրաժեշտ պէտքեր և եկեղեցական սպասներ: Անասունները անոնց կը տրուին իրր ընծայ, վասնզի Պրոպիոսը օրհնուած և աշխիւ մարդ մ'էր:

Ուրիշ հայ եպիսկոպոս մը որուն անունն էր Մակու⁽¹⁾, բարեպաշտական և աշխիւ նպատակաւ 14 տարի վերջ կամ քիչ մը աւելի այն կողմերը գնաց, ան շատ պատուաւոր կերպով շարժելով՝ իր հաճութեամբ քանի մը քահանաներով գընաց նոյն երկիրը: Ան հոն չինեց սղիւսէ եկեղեցի մը, ծառեր տնկեց և զանազան սերմեր ցանեց, քաղքներ գործեց և շատ մկրտութիւններ կատարեց: Երբ այս ազգերուն իշխանները կը տեսնէին այս նոր պատահանները՝ կը զարմանային նոյն մարդերուն վրայ, մեծապէս հաճոյք կ'զգային անոնց մասին և կը պատուէին զանոնք, անոնցմէ իւրաքանչիւրը կը հրաւիրէին իրենց գաւառը և իրենց բնիկ ժողովուրդին մօտ, և կը խնդրէին անոնցմէ՝ իրենց ուսուցիչները ըլլալ. և անոնք մինչև հիմակ հոն են: Եւ այս եղելութիւնը շնորհաց նշան մ'է Աստուծոյ ոգորմութեան որ կը խնամէ ամէնքը որ ամէն տեղ իրենն են: Եւ այսուհետեւ հասած է ժամանակը, որ անոր զօրութեան ներքեւ է, «մինչև լրումն հեթանոսաց մտցէ», ինչպէս կ'ըսէ առաքեալը⁽²⁾:

(1) Թարգմանիչները հայերէն կարդալ եւ Աստուած բառերէն կը շինեն վերի յունարէն բառը. բայց հուանական կը թուի որ *Λαυρεντιος* բառին զիբրուս փոփոխութեամբ կարելի է հանել *Աստուծաւոր* բառը. բայց այս վերջինս ալ հայկական հին անուն մը չըլլալով՝ եպիսկոպոսին անձին բարեպաշտութիւնը հասկնող բառ մը եղած կրնայ ըլլալ:


(1) Հաւանաբար Մակար կամ Մարկոս:

(2) Հովմար. ԺԱ. 25:

Արդարեւ Պարսից թագաւորն ալ, ինչպէս կը պատմեն գործին տեղեակ մարդիկ, 7 տարիէ ի վեր հրաժարած է ուտել հեղձուցեալ միս և արիւն, ինչպէս նաեւ անսուրբ կենդանիներ և թռչուններ, սկըսեալ այն թռուկանէն երբ Թրիպոնեան բըժըշկապետը (Archiatros) անոր մօտ կը հասնի և որ գերի ինկած էր այն ժամանակ. և մեր պայծառափայլ թագաւորէն կը ժամանեն Պիթովի, որ կատարեալ մարդ մ'էր, անկէ յետոյ Գասնովի, և այժմ Գարրիէլ Նիսիպցի քրիստոնեայ մը: Ան նոյն ժամանակէն սկսեալ կը սորվի թէ ինչ է իր ուսեստը, որ անսուրբ չկրնար նկատուիլ համաձայն հին սովորութեան. քանի որ մանաւանդ ուտելէ առաջ օրհնել կուտար

զայն: Եւ նաեւ քրիստոնէից կաթողիկոսը Յովսէփ, անոր մօտերմը և բարեկամն էր, վասնզի ան բժիշկ մ'էր և Մոզպետէն յետոյ առաջին տեղը կը բազմէր անոր մօտ. և ինչ որ կը խնդրէր՝ ան կ'ստանար:

Գերիներու և սուրբ մարդոց հանդէպ ունեցած իր քաղցրատրոյթութենէն զատ, իրեն անձնուէր քրիստոնեայ բժիշկներու խորհուրդով շինեց հիւանդանոց մը, որ առաջ հոն անձանօթ էր. և իր արքունի զանձէն շնորհեց հարկեր ջորի և յիսուն ուղտ կահ կարասիներով և ապրանքներով բնանաւորուած, տասներկու բժիշկներ, և այլ օգտակար պիտոյքներ: Եւ արքունի դրան...» (այս ճեղ ձեռագիրը կ'ընդհատի):
ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՆՈՒՆԻ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐ ԳՐՈՒԱՄ 1683-ԻՆ(*)

Սարգիս վարդապետ նկարագրելով Երուսաղէմի մէջի սրբատեղիները, կը շարունակէ ըսելով: (Էջ 104 ա. —)

«Վասն սրբոյ Յարութեան համապարհի եղեալ ճեղեացն:»

«Ելանելով ի Սրբոյն Յակոբայ, և ընթանալով դէպի հիւսիս, նախապէս գտանին Դ Ասորոց ազգի վանք, զոր այլազգիքն ոչ ինչ պատճառաւ յափշտակեալ՝ մզկիթ են արտելալ, որ այժմ է աւերակ և անբնակ ի մարդկանէ: Մինն է մերձ Սրբոյ Վանիցս՝ հիւսիսային կողմանէ, որ է Սրբոյ առաքելոյն թուամայի տունն: Եւ երկրորդն՝ սակաւ ինչ այլ հեռի՝ է տեղիք իւզարեր կանանց, որոց պատահեաց Յիսուս, և կալան զոտս նորա, և երկրպագին նմա: Իսկ երրորդն մերձ սմին, ի մէջ պարտիզի միջ՝ կառուցեալ ի վերայ Սրբոյն Յակոբայ անուան, որ այժմ եկեղեցոյ դիրքն՝ տակաւին երեւի մինչև ցայսօր:»

«Եւ ի նոցանէ հեռացեալ, անցանելով բերդի դրամբն, և հակեալ դէպ յարեւելս, գտանի ևս վանք մի Յուշաց ազգի, յա-

նուն Սրբոյն Յովհաննու Կարապետին, որոյ եկեղեցին է զմէթաւոր, և գեղեցիկ, բայց է յոյժ հնազոյն, և ունի խուցս եւ բնակութիւնս միաբանից և ուխտաւորաց:»

«Եւ անտի ընթացեալ սակաւ ինչ դէպի հիւսիս, պատահի Յուշաց ազգի մեծ վանքն, որ է պատրիարքարան նոցա, և է կից Սրբոյ Յարութեան տաճարի, և ունի փոքրիկ եկեղեցի մի յանուն Սրբոյն Կոստանդինոսի բարեպաշտ թագաւորին, որոյ զոյ լուսամուտ մի, որ հայի ի մէջ Սրբոյ Յարութեան, և ունի բազում տեղիս, զի անդ բնակին բոլոր կարգաւորք և միաբանք Յուշաց:»

«Եւ անտի ևս յառաջեալ, տեսանի զուռ մի փոքրիկ դէպի յարեւելս, որով մտանի ի գաւիթ Սրբոյ Յարութեան աշխարհամատրան տաճարի: Որ է լայն և ընդարձակ, ունի գերկայնութիւն հարաւայ առ հիւսիս ԿԶ (66) ոտնաչափ և լայնութիւն Ը (50) ոտնաչափ:»

«Վասն Յոնանու աւետարանչի եկեղեցոյն:»

«Ի կողմանս վերոյստացեալ հրապտարակին գոն վանորայք և եկեղեցիք, որոց առաջինն է Սուրբ Յոնանու Աւետարանչի եկեղեցին, որ է ի ձեռս Հայոց ազգի, և ունի Բ սեղան, մինն Սուրբ աւետարանչի անուան, զի յաւուր խաչելութեան Քրիս-

(*) Շարունակութիւն ՍԻՈՆԻ նախորդ թիւէն: